



Ա. ԱՆՆԻՅԱՆ

(Ճարտարապետության բեկնածու)

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զմիածնի Մայր Տաճարը հանդիսանում է հայկական դասական ճարտարապետության ամենանշանավոր ու ամենահանրահայտ կոթողներից մեկը, եթե ոչ ամենահանրահայտը: Ըստ հայ մատենագրության նրա սկզբնական կառուցվածքը ստեղծվել է Հայաստանում քրիստոնեական կրոնը պետական հռչակվելու առաջին տարիներին:

Դարերի ընդերքից բարձրացող այդ հուշարձանը անցնելով ժամանակի ու մարդկային բիրտ կրքերի անընդմեջ փորձություններով, բազմաթիվ անգամներ ենթարկվել է մեծ ավերածությունների, կրեմն վերածվել զրկված ավերակների կույտի: Սակայն, նորից և նորից կյանքի է կոչվել այն, տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր վերակառուցումներ և ստացել ժամանակի ոգուն համապատասխան նոր երանդներ, անգամ նոր կերպարանք:

Հատկապես նախնական ձևի առաջնական փոփոխությունները ստեղծել են հատկապես առավել բարդ կերպար, կառուցողական արվեստի աստիճանական զարգացումը հիմք է հանդիսացել կոնստրուկտիվ առավել համարձակ հնարավորությունների և այդ ամենը երկնել են տա-

րածական-ծափալային նոր՝ առավել բարդ նորինվածք:

Հետևապես, Մայր Տաճարի կառուցվածքը ակնառու կերպով ցույց է տալիս հայկական ճարտարապետության զարգացման հանդուցային մի քանի կարևորագույն շրջանները, դառնում հայ ճարտարապետության վաղագույն շրջանի զարգացման ընթացքը պատկերող մի կենդանի պատմություն և դրանով իսկ բացառիկ տեղ գրավում Հայաստանի (մենք կասե՞ինք ոչ միայն Հայաստանի) ճարտարապետական արվեստի բազմադարյան պատմության մեջ:

Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի բնույթի, նրա կրած հետագա փոփոխությունների ու վերակառուցումների հարցերի առավել ստույգ լուսարանության համար հետաքրքիր նյութեր տվեցին 1955—1956 թվականներին Տաճարի ներսում ձեռնարկված պեղումները, որոնք կատարվեցին Տաճարի վերանորոգման շինարարական աշխատանքներին զուգընթաց:



Սովետական կառավարության որոշմամբ ու միջոցներով 1954 թվականի նոյեմբերից մինչև 1955 թվականի հոկտեմբերը շինարարական խոշորագույն աշխատանքներ ծա-

վալվեցին Տաճարի ընդհանուր կառուցվածքի ամրացման և առանձին հատվածների հիմնովին վերակառուցման ուղղությամբ:

Տարբեր դարերում կատարված վերանորոգությունները, երբեմն շինարարական տեսակետից ոչ բարձր որակի, թուլացրել էին դմբեթակիր մույթերի ու կամարների կրողունակությունը և մի քանի հանգույցներում առաջացրել վտանգավոր ձեղքեր: Առանձնապես վտանգավոր միճակի մեջ էր հարավարևմտյան մույթը: Այստեղ, մի շարք վերանորոգություններից հետո, մույթի արևմտյան ճակատը ամբողջ բարձրությամբ հաստացվել էր աղյուսի շարվածքով, որը հետագայում անջատվել էր մույթի սկզբնական քարե զանգվածից և ըստ էության պատճառ հանդիսացել դմբեթակիր կամարների կրունկներում առաջացած խոշոր ձեղքվաթին: Մանր բեռից ճաքեր էին առաջացել նաև հարավ-արևելյան մույթի վերին շերտերում և այնտեղից սկզբնավորվող կամարների կրունկներում: Խարխուլել էին նաև չորս արսիղների անկյուններում գոյություն ունեցող խաչաձև թաղերը:

Այս ամենը, ինչպես և տանիքից անարգել ներս հոսող ջրերը, լուրջ վտանգ էին ստեղծել դմբեթի, ինչպես և ամբողջ հուշարձանի փլուզման համար:

Այդ վտանգը կանխելու նպատակով, ձեռք առնվեցին արմատական միջոցառումներ:

Բացվեցին դմբեթակիր մույթերի հիմքերը, չորս կողմից պատվեցին երկաթ-բետոնյա հաստ շերտով և հիմքերի հորիզոնի ուղղությամբ միջմույթային տարածության վրա ստեղծված երկաթ-բետոնյա հատուկ հեծաններով միացվեցին իրար: Այդպիսով, մույթերի հիմքերը ոչ միայն ուժեղացվեցին, այլև առնվելով երկաթ-բետոնյա ուղղանկյուն շերջանակի մեջ, դարձան մի անքակտելի կոշտ սիստեմ:

Այնուհետև մույթերի հիմքերից մինչև կամարների կրունկները առնվեցին երկաթ-բետոնյա ուժեղ պատյանի մեջ և հին կամարներին զուգահեռ ընթացող երկաթ-բետոնյա նոր կամարների միջոցով միացվեցին միմյանց:

Հետևապես, թե՛ հիմքերը, թե՛ բոլոր մույթերն ու դմբեթակիր կամարները առնվելով երկաթ-բետոնյա ընդհանուր պատյանի մեջ, վերածվեցին մի ամբողջական, ուժեղ, անքակտելի մոնոլիտի:

Խաչաձև թաղերից վնասված էին հարավ-արևելյան և հյուսիս-արևմտյան թաղերը: Այստեղ նույնպես ժամանակին կատարվել էր մեծ վերանորոգում: Նախկին քարաշեն թաղի տակից (նեբրեկից) կառուցվել էր իջեցված կենտրոնով աղյուսաշեն թաղ: Ընդ

որում, թաղի խաչվող կողերը արված էին փայտից: Հարավ-արևելյան թաղը ամրացվեց առանց հին կառուցվածքի փոփոխության, իսկ հյուսիս-արևմտյան թաղի կենտրոնը նեբրեկից պատվեց երկաթյա հատուկ ցանցով և ապա ծեփվեց, պահպանելով թաղի նախկին ձևը: Նախկին տուֆաշեն սալահատակի փոխարեն, դմբեթակիր տարածությունը, մույթերի արտաքին պարագծով ներառյալ, ծածկվեց մարմարյա սալերով: Տաճարի մնացած տուֆաշեն սալահատակը հիմնովին վերակառուցվեց:

Ամրացվեցին Տաճարի տանիքի քարե սալերի արանքները, և բացի դմբեթի ու զանգակատների տանիքներից, մնացած տանիքի քարե սալերի վրա կառուցվեց թիթեղապատ լրացուցիչ տանիք:

Վերանորոգվեցին Տաճարին կից թանգարանային սենյակները:

Մեծագույն ծավալի աշխատանքներ կատարվեցին որմանկարչության ուղղությամբ:

Տանիքից ներս թափանցող ջրերի և դրա հետևանքով առաջացած հարատև խոնավության հետևանքով, որմանկարները ոչ միայն դունաթափվել, այլև նրանց մեծագույցն մասը ուղղակի քայքայվել և ծեփի հետ միասին թափվել էին ցած:

Հովնաթանյանների նկարչությունից պահպանված հատվածներում (դմբեթի, թմբուկի, հյուսիսային և հարավային ապսիդների, մույթերից ղեպի հարավ և հյուսիս ընթացող կամարների մակերեսներում) թարմացվեցին գույները, լրացվեցին քայքայված մասերը և նույնությամբ վերականգնվեց նախկինը: Իսկ մնացած մասերը (արևելյան ապսիդ, խաչաձև թաղեր, արևմտյան ապսիդ, պատեր, մույթերը, մույթերը միացնող կամարները) ծածկվեցին Հովնաթանյանների արվեստի ոգով կատարված նոր որմանկարչությամբ:

Վերականգնվեցին Վհարանի, Թանգարանային սենյակների և զանգակատան ներսի պատերի նկարազարդումները:

Վանքի հյուսիսային և արևելյան կավաշեն պարիսպները փոխարինվեցին նոր՝ սրբաբառաշ տուֆաքարով կառուցված շքեղ պարսպապատերով:

1956 թվականին Կաթողիկոսարանի միջոցներով կատարվեցին Տաճարի հատակի տուֆաշեն հատվածի մարմարապատման աշխատանքները:

Շինարարական այս աշխատանքների ընթացքում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորը ձեռնամուխ եղավ դիտահետազոտական աշխատանքների:


Աղաթանգեղոսի մօտ հիշատակված աշխատության համաձայն, Մայր Տաճարի կառուցման վայրի բնորոշվածը կատարվել է Կրիզոստոմոսի կողմից՝ հիմնական վրա, արքունի ապարանքների ներսում՝ Տաճարի խորքի մոտ՝ Տաճարի ներսում գրություն մեջ հիշատակվում է.

«Նու տեղանի ի մէջ քաղաքիս, մօտ յապարանսն արհունի, խառնաձևն նախա-
րակաձև խառնաձև ոսկի, մեծութեամբ իր-
եւ զմեծ մի բոլոր, և ի վերայ նորա սին
մի ներկէն բարձր մինչև յոյժ, և ի վերայ
նորա բակաղաղ մի ամպեայ և խաչն լու-

և այս սեանց խաչքն հաւատարմ էին այնր
լուսեղէն սեանն թակաղաղի, զի նա
բարձր էր քան զնստա»¹:

Այնուհետև այդ պատկերների տեսիլի
մեջ ներկայացված բացատրության մեջ ներ-
կայում է.

«Որոյ սեանն խառնաձևն ոսկի է, և նո-
րուն սին հրեղէն, և թակաղաղն ամ-
պեայ, և խաչն լուսեղէն ի վերայ նորա ոս-
կի խառնաձևն՝ վերին հաւատարմեան ան-
շարժութեան է. և սինն, ներկէն՝ կարողի-
կէ, եկեղեցի է, որ ժողովէ դամեանայն ժո-
ղովորդս ի մի միաբանութիւն հաւատոյ
ի ներքոյ թեոյ խորոյ»² (ըստ զոմար իմն
է—Ա. Ս.):



Մայր Տաճարի հարավ-արևելյան մուտքի տակ գտնվող կրկնակի խառնաձևերի
արևելյան նախադար

սոյ ի վերայ նորա: Նու նայեցայ, և տե-
սանեմ այլ խառնաձևն երկու. մի՛ ի տեղուցն
ուր վկայեաց սուրբն Գայիանէ երկուր
ընկերօքն. և մի՛ ի տեղուցն ուր վկայեաց
սուրբն Հովսեփսմէ երեսուն և երկու ընկե-
րօքն, և մի՛ ի տեղուցն հնձանին: Նու այն
խառնաձևը կարմիր էին ի գոյն արեան, և
սինը ամպեղէնը, և խոյակը հրեղէնը. և
ի վերայ սեանցն երկու խաչք լուսեղէնը
ըստ նմանութեան տեառնանման խաչին,

նու ապա մի փոքր անց շարունակվում է.

«Նու տեղին այն լիցի տաճար Աստուծոյ,
և տուն աղօթից խեղճութեամբ ամենայն
նաւատացելոց, և արդո Բանանայալե-
տութեանն»³ (ընդգծումը իմն է— Ա. Ս.):

1. Աղաթանգեղոսի Գաղտնաբերման Զոյրոց, Թիֆլիս,
1914, գլ. ԳԲ, էջ 375—376.

2. Նույն տեղում, էջ 378—379.

3. Նույն տեղում, էջ 379.

Բացատրելով, որ մյուս երեք սյուների պատկերների տեղում պետք է ստեղծվեն քրիստոնեական կրոնի ճանաչման նախորդ շրջանում նահատակված կույսերի հիշատակին «վկայարան», կաթողիկոսի շինարարության վերաբերյալ տեսիլի վերջում զգուշացվում է Գրիգոր Լուսավորչին թե՛

«Արդ՝ զգոյշ լիւր աւանդիդ, որ քեզդ հաւատացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. շինեսցիր գտանար անուանեն Աստուծոյ ի տեղունքն ուր ցուցաւ բեզ, ուր սիւնն հրեղէն ունէր զոսկի խաւիսխն»⁴ (ընդգծումը իմն է—Ա. Ս.):

Եվ ահա, ի կատարումն տեսիլի, ձեռնամուխ են լինում շինարարության: Ազաթան-զեղոսը հիշատակում է, որ նախ կատարվում են վկայարանների կառուցումները:

«Եւ զայս սասցեալ (խոսքը Մ. Գրիգոր Լուսավորչի կողմից տեսիլի հաղորդման մասին է—Ա. Ս.)՝ հրամայեաց զի զնիւթ շինուածոյն վաղվադակի պատրաստեցին: Եվ ամենայն բազմութեան մարդկանն լուծալ զայն՝ իւրաքանչիւր ընթացան պատրաստել զնիւթսն: Եւ կուտէին ի հրաժայեալ տեղիսն ոմն վէմ, ոմն քար, ոմն աղիւս, ոմն զմայր փայտն, պատրաստէին խնդալից փութով և մեծաւ երկիւղիւ:

Եւ ինքն Սուրբ Գրիգորիս զլաւ ճարտարութեան շինողացն ի ձեռն առեալ՝ զերանելացն վկայարան հանգստարանացն զնիւթունսն յօրինէր: Եւ մէն մի իւրաքանչիւր ամենայն բազմութեանն սատարութիւն ի ձեռն առեալ, ըստ զեղեցկադիր յարմարելոյ հիմն արկին ի կատարումն շինուածոյն կանգնեցին: Ամենայն որ ձեռն ի գործ արկեալ, և կանանտոյն անգամ սատարեալ ըստ իւրեանց տկարութեան կանացի ուժոյն, և աշակէս առ հասարակ գործէին զգործն հաւատով և մեծաւ երկիւղիւ...

Եւ կանգնեալ երիս վկայարանս, մի՛ ի հիւսիսոյ յարեւից կողմանէ քաղաքին. ուր վկայեաց սանականն Հովսիսիմէ երեսուն և երկու բնկերօք: Եւ զմիւսն շինեցին ի հարաւակողմ կուսէ անտի, ուր վկայեացն Գայիանէ եօրուն սնուցիչն երկու բնկերօք: Եւ զմիւսն ևս մօտ ի հրեձան ի մէջ ալպոյն, ուր էին վանք մոցա»⁵:

Ուշագրավ է, որ վկայարանները, որոնք անշուշտ պետք է ունենային փոքր շափեր, հիմնադրվում են քրիստոնեական կրոնը պետական հռչակելուց անմիջապես հետո, իսկ կաթողիկոսն, որը ինչ խոսք, պետք է ունենար անհամեմատ մեծ կառուցվածք, մի

փոքր ուշ: Սկզբում պարսպապատվում է կաթողիկոսի կառուցման վայրի ընդհանուր տերիտորիան, և միայն հետո, երբ Գրիգոր Լուսավորչի մեկնում է Կեսարիա, ձեռնադրվում է բահանայապետ ու վերադարձից հետո երկրում սկսում քրիստոնեական պաշտամունքի կառուցվածքների շինարարությունը, ձեռնամուխ են լինում նաև կաթողիկոսի կառուցման աշխատանքներին:

Վկայարանների հիմնադրման տեղեկությունները հաղորդելուց հետո, Ազաթան-զեղոսը գրում է.

«Եւ թագաւորան և ամենայն ժողովրդովն հանդերձ երթեալ հասանէր անդէն ի տեղին ցուցեալ հրեղէն սեանն ոսկիակալ խաւսխիւն, և անդէն բարձր քաղաքումով փակեալ գտելին ի պատիւ, և դամբք և զոնափակօք ամրացուցեալ, և կանգնեալ և անդ զնշան փրկական խաչին. զի առհասարակ հասեալ ամենայն որ յայն տեղի՝ ամենազօր Արարչին Աստուծոյ երկրպագեալ ծուներ կրկնեացին»⁶ (ընդգծումն իմն է—Ա. Ս.):

Իսկ երբ նկարագրվում է Գրիգոր Լուսավորչի վերադարձը Կեսարիայից Վաղարշապատ, նշվում է.

«Հասանէր և յառաջի դաստակերտսն իւր, յոտաւատակն Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաք, ուստի նախ զառաջինն աստուածաստառ հրամանացն լինէր սկիզբն, ուր նախ նշմարեացն և նշանակեալ կանգնեաց զնշան խաչին սրբոյն, ուր և սուրբ վկայքն Աստուծոյ զետեղեցան, և նոցա վկայարանսն կանգնեաց սեղանս Աստուծոյ ի հանգիստ սրբոցն. և զնկատեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց, զցուցեալն նմա ի տեսլեանն, զյառաջագոյն զրոշնեալն իւր, և կանգնեաց անդ զնկեղեցին Քրիստոսի»⁷ (ընդգծումն իմն է—Ա. Ս.):

Այսպիսով, ըստ Ազաթան-զեղոսի վկայության, Մայր Տաճարի կառուցումը տեղի է ունեցել Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ թագավորի ժամանակաշրջանում՝ Հայաստանում քրիստոնեական կրոնը պետական հռչակելու տարիներին:

Շահյաթունյանը այդ առթիվ գրում է.

«Եւ այս ամենայն լինէր ի հնգետասներորդ ամէ թագաւորութեանն Տրդատայ ցոտան և Խոթնեորդ ամէ՝ այն է, յամէ Տեառն 301, ցամն 303՝ յորում ամի հիմնարկութեամբ՝ պայծառ շինուածովք կա-

4. Ազաթան-զեղոսի Պատմութիւն Հայոց, էջ 384:

5. Նույն տեղում, գլ. ԺԳ, էջ 385—386:

6. Նույն տեղում, գլ. ԺԶ, էջ 391—392:

7. Նույն տեղում, գլ. ԺԷ, էջ 424—425:

ույցեալ կանգնեցաւ սոյն կաթուղիէ եկեղեցի»⁸։

Մայր Տաճարի կառուցվածքը որոշ ժամանակ անց ըստ երևույթին ենթարկվել է լուրջ վնասվածքների։

Փափստոս Բուզանդը, անդրադառնալով Շապուհ Բ-ի Հայաստանում կատարած ավերածություններին, հիշատակում է.

«Առնում էին Վաղարշապատ քաղաքն էլ, քանդում, բրտում էին, հիմքից կործանում էին. այս քաղաքից էլ զերի էին տանում տասնեկինը հազար տուն։ Ամբողջ Բաղաբում շենք չըղղին, բոլոր Բաղաբանդ էին անում, կործանում»⁹ (ընդգծումն իմն է— Ա. Ս.)։

«Ապա ի տկարանալ իշխանութեան հայոց և ի մեկնելն մեծին ներսէսի Արուս Հայրապետի ի Յունաստան, հրամանաւ Շապուհ Բ արքային Պարսից ուրացեալքն ի հաւատոց Մահրուսան և Վահան զօրօք նոցին Պարսից մահալ ի Հայաստան յամի 380՝ անբեցին և զերեցին զբաղում գաւառս. ընդ որս և զՎաղարշապատ քաղաք տապալեցին ի հիմանց... Ուր որպէս երեկ անբեալ էր և մեծապէս և մեծ եկեղեցին կարուղիէլ...»¹⁰ (ընդգծումն իմն է— Ա. Ս.)։

Բուզանդի այդ վկայությունից համանման եզրակացության են եկել նաև այլ հեղինակներ¹¹։



Մայր Տաճարի հարավ-արևելյան մուտքի տակ գտնվող կրկնակի խաչիսյների հարավային ճակատը

Այս վկայությունից իրավացիորեն եզրակացություն է արվում, որ Վաղարշապատ քաղաքի ավերման ժամանակ վնասվել է նաև կաթուղիկեն։

Շահխաթունյանը գրում է.

8. Հովհ. Շահխաթունյան, Ստորագրություն Կաթուղիէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, էջմիածին, 1842—ՌՄԳԱ, հատ. Ա, էջ 15։

9. Փափստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երվան, 1947 թ., Զորքորդ դպրություն, գլ. ՄԵ, էջ 221։

Որ այդ հետևությունը միանգամայն հավանական է, երևում է Բուզանդի նաև այլ հաղորդումներից։ Այսպես, խոսելով Հայրենիքին դավաճանած և Շապուհ Բ-ի մոտ ծա-

10. Հովհ. Շահխաթունյան, Ստորագրություն... հատ. Ա, էջ 18։

11. Նկարագրություն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի, Վաղարշապատ, 1890—ՌՅԼԲ, էջ 5։ Մենքուզ վարդապետ, Էջմիածին և հայոց հաղույն եկեղեցիներ, Էջմիածին, պրակ Ա, էջ 93։

ռալույթյան անցած Վահան Մամիկոնյանի և Մեհրուժան Արծրունու արարքների մասին, գրում է.

«Այնուհետև Վահան Մամիկոնյանը և Մեհրուժան Արծրունին, — այս երկու պիղծ, անօրէն, դժնյա մարդիկ, որոնք ետ էին կացել աստվածապաշտութեան ուստից և ուրացութեամբ հանձն էին առել ու պաշտում էին մազդեական անաստված կրոնը՝ սկսեցին Հայոց աշխարհում, բոլոր գավառներում, ամեն տեղ ավերել եկեղեցիները, բխտունեացներին աղորժի տեղերը: Եվ շատ մարդկանց, որոնք նրանց ձեռքն էին բնկնում՝ ստիպում էին աստվածապաշտութեանը թողնել, մազդեական պաշտամունքն ընդունել»¹²:

Եթե նրանք ամենուրեք ավերում էին եկեղեցիները իբրև բրիստոնյաների աղոթատեղիներ, ապա, հազիվ թե, Վաղարշապատի ավերման ժամանակ անտարբեր զոնվեին դեպի Մայր Տաճարի կառուցվածքը: Ամենայն հավանականությամբ, ինչպես նշում են Շահաբունյանը և մյուսները, այդ ավերածություններին պետք է ենթարկված լինեք նաև Էջմիածնի Մայր Տաճարը — Կաթողիկոսն, մենք կասենք, ավելի մեծ չափով Մայր Տաճարը:

Նշանակում է, կառուցումից զրեթե ութսուն տարի հետո, Կաթողիկոսի կառուցվածքը ենթարկվել է լուրջ ավերածությունների:

Բուզանդը անդրադառնալով երկրի ավերածություններից հետո ձեռնարկված բարենորոգութուններին և վերակառուցողական աշխատանքներին, հիշատակում է.

«Շինում էին թշնամիներից ավերված բոլոր տեղերը, եկեղեցիները նորոգում, և թագավորությունը հետզհետե նորոգվում էր և զործերը կամաց-կամաց կարգի էին դալիս...»¹³:

Մի այլ տեղ Բուզանդը խոսելով ժամանակի կաթողիկոս Ներսեսի գործունեության մասին, հատնում է, որ նա «եկեղեցիների և վկայաբեկների շենքերը ամբողջապես նորոգեց ու բարեկարգեց»¹⁴ (ընդգծումն իմն է — Ա. Ս.):

Բնական է, երկրի մյուս եկեղեցիների վերանորոգությունների հետ մեկտեղ (թերևս առաջին հերթին) պետք է վերանորոգվեր Մայր Տաճարը: Բուզանդի հիշյալ տեղեկությունների հիման վրա նման վերանորոգում

ակնարկվում է նույն Մայր Տաճարի համար՝ Ներսես կաթողիկոսի կողմից¹⁵:

Նշանակում է՝ Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքի առաջին վերանորոգումը պետք է որ տեղի ունեցած լինի 4-րդ դարի վերջերին: Ըստ Շահաբունյանի, այն կատարվել է 380 թվականին¹⁶:

Շատ չանցած, Մայր Տաճարի վերանորոգմանը անդրադառնում է նաև Սահակ կաթողիկոսը (387—439 թ. թ.).

«Եւ եղև հանումն և նորոգումն ոսկերացն Գայիանէայ և Հոփսիմէայ և ընկերաց նոցին՝ ի Սահակայ կաթողիկոսէ, զի եղածովն Ս. Գրիգորի կային նորա: Եւ շինեաց զվկայարանս վիմատաշ, կոփածոյ քարամբք ի Վաղարշապատ քաղաքի: Եւ նորոգեաց գտուն Աստուծոյ՝ աւսինքն գտուր Եկեղեցին: Զի մեծին Գրիգորի եղեալ էր զհիմն ցայն, որպէս և ցուցեալ էր տեսլանն Երեմեայի...: Եւ եղև այս ի յամս Արդաի վանեաց երիցուսրոյ ի Վաղարշապատ քաղաքի»¹⁷ (ընդգծումն իմն է — Ա. Ս.):

Ինչպես երևում է, Շապուհ Բ-ի Հայաստանում հատարած ավերածությունների ժամանակ Մայր Տաճարը ենթարկվի է բավականին մեծ ավերումների, որ կարճ ժամանակամիջոցում անհրաժեշտ է եղել երկու մերանորոգում:

Ընդ որում, եկեղեցի երկրի տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական ծալքի աստիճան լարված միջանկյալ (պատերազմներ, անուհետև հուլիական պետականության անկում (428 թ.), երկրի անկախության համար կատարվող ժողովրդական ապստամբություններ, տնտեսական ծանր վիճակ և այլն), ըստ երևույթին հնարավոր չի եղել մեծ միջոցներ ներդնել շենքը հիմնովին վերականգնելու նպատակով և բավարարվել են ծալքի աստիճան անհրաժեշտ մասնակի վերանորոգումներով: Եվ միայն 5-րդ դարի վերջին (485 թ.) Վահան Մամիկոնյանի Հայաստանի տանուտեր նշանակվելուց հետո, երբ երկրում նորից ծավալվում է մշակութային և շինարարական կյանքը, երբ սկսվում են ըստ էության վերականգնել ավերված քաղաքները և դուրսերը և հատուկ ուշադրություն է դարձվում մասնավորապես Դվին և Վաղարշապատ քաղաքների կառուցվածքների վրա, Վահան Մամիկոնյանը ձեռնամուխ է լինում նաև

12. Փալատոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1947 թ., Զորքող դպրություն, գլ. ՄԹ, էջ 225—226:

13. Նույն տեղում, Հինգերորդ դպրություն, գլ. Ա, էջ 235:

14. Նույն տեղում, էջ 236:

15. Մեսրոպ վարդապետ, Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, Էջմիածին, պրակ Ա, էջ 93:

16. Հովհ. Շահաբունյան, Ստորագրություն..., հատ. Ա, էջ 20:

17. Մամուլի Անեցույ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 267—268:

էջմիածնի Մայր Տաճարի հիմնովին վերակառուցմանը:


Ղազար Փարպեցին, անդրադառնալով Վահան Մամիկոնյանի գործունեությանը, գրում է.

«Այս եկեղեցի հասանելի այնուհետև ի Վաղարշապատ քաղաք հանդերձ ողջախորհուրդ և աննկեղ ուխտագա՜հ նախարարօքն Հայոց, կատարելը գտնվողական ուխտա և զպատարագս ի սուրբ եկեղեցուցն կարողիկէի, զոր նիմնադրեալ նորոգեաց մեծապայծառ շէնհուրեամբ զհնազանդ զորձ նախնեացն իւրոց, քաջ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան»¹⁸ (ընդգծումն իմն է—Ա. Ս.):

Վաղարշապատ քաղաք և ի Գնի և Մղրալս և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց¹⁹ (ընդգծումն իմն է—Ա. Ս.):

Ճարտարապետ Թորամանյանը Վահան Մամիկոնյանի «հիմնարկեալ նորոգեաց»-ը հասկանում է, որ նա «նիմեն ի վեր նորոգ շինեւ է»²⁰, քանի որ շինեւ ամբողջովին քանդակով՝ նիմեն ի վեր վերաշինեւ է...²¹ (ընդգծումն իմն է—Ա. Ս.):

Որ Վահան Մամիկոնյանը կաթողիկոս սկզբնական կառուցվածքը հիմնովին վերակառուցել է՝ «հիմեն ի վեր նորոգ շինեւ է», երևում է նաև Սերեոսի հայտնած տեղեկությունից: Ինչպես տեսանք, Սերեոսը



Մայր Տաճարի հյուսիս-արևելյան մույրի տակ գտնվող կրկնակի խաչիսխների հարավային նակատը

Սերեոսը (7-րդ դարի պատմիչ) ինչ-որ առիթով խոսելով Վահան Մամիկոնյանի մասին, նույն փաստի վերաբերյալ գրում է.

«Այս Վահան ժողովեաց և զհարկս աշխարհին Հայոց և շինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աներեալ էր Պարսից ի

հայտնում է, որ Մամիկոնյանը Հայաստանի մյուս վայրերում պարսիկների կողմից ավերված եկեղեցիների կառուցման հետ

19. Պատմություն Սերեոսի և պիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1912, գլ. Ա, էջ 35:

20. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942 թ., հատ. Ա, էջ 111:

21. Թ. Թորամանյան, Նյութեր..., Երևան 1945 թ., հատ. Բ, էջ 61:

18. Ղազարայ Փարպեցու Պատմություն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, գրուող Գ, 22, էջ 345—346:

մեկտեղ «շինհաց եկեղեցիս մեծամեծս» նաև «ի Վաղարշապատ քաղաք»:

Խնարկն այստեղ խոսքը վերաբերում է Վաղարշապատի եկեղեցիներից առաջին հերթին Կաթողիկեին, որովհետև Վահան Մամիկոնյանի անվան հետ կապվում է Վաղարշապատի Կաթողիկեի վերակառուցումը, որը Փարպեցու վկայությամբ բաշ հայտնի պետք է լինեի Սեբեոսին: Գուցե Սեբեոսին (որը ժամանակի տեսակետից այնքան էլ շատ հեռու չէր այդ դեպքերի ժամանակաշրջանից) հայտնի էին այդ փաստերը նաև այլ աղբյուրներից (գրավոր կամ բանավոր), որոնք մեզ չեն հասել: Ընդ որում, հետաքրքրական է, որ Սեբեոսը ոչ թե Փարպեցու նման ասում է «նորոգեաց», այլ «շինհաց» և ի նկատի ունի այն եկեղեցիների կառուցումները, «գոր աւերեալ էր Պարսից»:

«Նորոգեաց» նախկինում օգտագործում էին և «կառուցել», «նոր կառուցել» և «վերակառուցել» իմաստով: Քանի որ Փարպեցու վկայության մեջ խոսվում է «նախնինների հնացած գործի» մասին, ապա այստեղ պետք է հասկանալ (ինչպես մինչև այսօր մեկնաբանվել է) «նորոգեաց» իմաստով, բայց հիմնովին, «հիմնարկեալ նորոգեաց» իմաստով, որը ըստ էության համազոր է եղել նորը կառուցելուն, ինչպես հաղորդում է Սեբեոսը:

Նշանակում է, 4-րդ դարի առաջին տարիներին ստեղծված էջմիածնի Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքը 4-րդ դարի վերջերին պարսիկների կողմից այնպիսի չափերի էր ավերման ենթարկվել, որ ներսն ու Սահակ կաթողիկոսների ժամանակաշրջանների (4-րդ դարի վերջ, 5-րդ դարի սկիզբ) վերանորոգումները չկարողացան ապահովել Կաթողիկեի նախնական ձևի պահպանումը և 5-րդ դարի վերջերին, երբ երկրում համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առավել լայն շինարարությունների համար, Վահան Մամիկոնյանը հիմնովին վերակառուցեց («հիմնադրեալ նորոգեաց»), կամ ինչպես Թորամանյանն է ասում՝ «հիմեն ի վեր նորոգ շինեց» այն (ընդգծումն իմն է—Ա. Ս.):

Նվ իրոք, հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ Մայր Տաճարի այժմյան կառուցվածքի տակ գոյություն ունեն, Տաճարի ներկա հորինվածքից խիստ տարբերվող, մեկ այլ, առավել հնագույն հորինվածք ունեցող շենքի մնացորդներ: Տաճարի զմբեթակիր մույթերի խարխսիների տակ պահպանվել են այդ հնագույն շենքի մույթերի խարխսիները, խարխսիների ներքնասալիկի հորիզոնի վրա գտնվող սկզբը:

Նախան սալահատակի մի քանի սալեր և խարխսիների հիմքերի սրբատաշ տուֆաքարով կառուցված երեքական շարքեր: Փաստորեն զմբեթակիր մույթերից յուրաքանչյուրի տակ գոյություն ունեն ոչ թե մեկական խարխսիներ (ինչպես սովորաբար կառուցվում է), այլ, միմյանց վրա դրված երկուական խարխսիներ: Ներքևի, այսինքն հնագույն շենքի խարխսիները թև՝ իրենց ոճական մշակումներով (պրոֆիլներով), թև՝ շափերով և թև՝ ընդհանուր հորինվածքով միանգամայն տարբերվում են վերևի խարխսիներից: Այսպես.

1. Հարավ-արևելյան մույթի ներքևի (այսինքն հնագույն շենքի) խարխսի արևմտյան ճակատի վերևի եզրը (որտեղից պետք է սկսվեր բարձրանալ իրեն համապատասխան մույթի ուղղաձիգ հարթությունը) ունի 1,405 մետր երկարություն, հյուսիսային համանման ճակատն ունի 1,40 մետր երկարություն և արևելյան համանման ճակատը՝ 1,39 մետր երկարություն:

Այս երեք ճակատներում և նրանց միացման անկյուններում խարխսի կազմող բոլոր քարերն ունեն միևնույն ձևի մշակումներ (պրոֆիլներ), որոնք ամբողջ պարագծով շարունակվում են և մույթի հարավային ճակատի երկու կողմերից շրջվելով ընդհատվում: Այդ ընդհատված տեղերից, նույն հորիզոնի ուղղությամբ ընթանում է հարթ մակերես, ուր ագուցվում են 1,21 մետր ընդհանուր ճակատով, 0,40 մետր և 0,53 մետր ելուններով առանց որևիցե մշակման (պրոֆիլների) սրբատաշ երկու հասարակ քարեր:

Նշանակում է՝ այս խարխսի երեք ճակատների երկարությունները ունեն ճիշտ ու ճիշտ միևնույն չափերը և ենթարկված են ճիշտ և ճիշտ միևնույն մշակման (պրոֆիլիրովկայի). իսկ դեպի զուրա (կողքի նավը) ուղղված ճակատը ունի ավելի փոքր չափ և ոչ մի մշակման (պրոֆիլիրովկայի) չի ենթարկված, սրբատաշ հասարակ քար է:

Նույն՝ հարավ-արևելյան մույթի վերևի խարխսի չորս ճակատներն էլ մշակված են (պրոֆիլներ ունեն): Այս խարխսի արևմտյան ճակատի վերևի եզրը (որտեղից բարձրանում է տվյալ մույթի ուղղաձիգ հարթությունը) ունի 1,28 մետր երկարություն, հյուսիսային համանման ճակատն ունի 1,29 մետր երկարություն, արևելյան համանման ճակատն ունի 0,975 մետր երկարություն և հարավային ճակատն ունի 0,89 մետր երկարություն:

Այսպիսով, ի տարբերություն ներքևի խարխսի, վերևի խարխսի չորս ճակատներն էլ մշակված են—պրոֆիլներ

ունեն—և որ կարևոր է՝ զեպի հյուսիս և արևմուտք ուղղված ճակատները, այսինքն զմերթապարհ կամարներին համապատասխանող ճակատները, լինելով միմյանց հակասար, անհամեմատ մեծ չափերի են (1,29 և 1,28 մ.) քան զեպի հարավ և արևելք ուղղված, այսինքն զմերթի ծանրությունը կրելուց ազատ ճակատների երկարությունները (0,89 և 0,975 մ.):

Չնչին տարբերությամբ համանման կառուցվածքներ ունեն նաև հարավ-արևմտյան, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան մույթների տակ գտնվող խարխախները, որոնք լուսանկարահանված, մանրագին շափազրված են և աչգ ամենի մասին արձանագրված է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի կողմից նշանակված հատուկ հանձնաժողովի կազմած ակտի մեջ²²:

Մենք մանրամասն ներկայացրինք միայն արևելյան մույթի տակ գտնվող խարխախների չափերն ու կառուցվածքը, որովհետև, այս մույթի խարխախները մշտապես դիտելու համար ստեղծվել են հատուկ բացվածքներ, որոնց միջոցով հնարավոր է ոչ միայն դիտել խարխախները, այլև կատարել անհրաժեշտ չափումներ: Իսկ մյուս մույթների խարխախները, մույթների ամրացման ժամանակ, առնվեցին երկաթ-բետոնյա կառուցվածքի մեջ և ծածկվեցին:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Մայր Տաճարի զմերթապարհ մույթներից յուրաքանչյուրի տակ գոյություն ունեն միմյանցից տարբեր երկուական խարխախներ:

Վերևի խարխախներից յուրաքանչյուրի երկու ճակատը, որոնք ուղղված են զեպի Տաճարի զմերթապարհ տարածությունը, ունեն մեծ լայնություններ, իսկ մյուս երկուսը, որոնք ազատ են եղել զմերթի ծանրությունը կրելուց, անհամեմատ փոքր չափերի են:

Ինքնըստիմրայան հասկանալի է, որ այդ մույթների զմերթապարհ կամարներին համա-

պատասխանող ճակատներին տրվել են ավելի մեծ չափեր՝ նշելով կառուցողական անհրաժեշտությունից: Այսինքն, մույթների այն ճակատներին, որ անմիջապես փոխանցվում է զմերթների ու զմերթակիր կամարների ծանրությունը, տրվել է առավել մեծ կտրվածք քան այն ճակատներին, որոնք ազատ լինելով զմերթի և զմերթակիր կամարների բեռից, ստացել են միայն թափակիր կամարների ծանրությամբ համապատասխան կտրվածք:


Կասկածից վեր է, որ վերևի խարխախները ստեղծվել են իբրև զմերթակիր եռոնվածի խարխախներ, որոնց մույթների երկու ճակատներից սկզբնավորվել են զմերթի ծանրությունը կրելու ընդունակ՝ մեծ լայնության կամարներ (զմերթակիր), իսկ երկու ճակատներից սկսվել են զմերթի ծանրությունը կրելուց ազատ ու քաղի համեմատաբար նվազ ծանրություններին նամապատասխան, ավելի փոքր լայնության կամարներ:

Ներքևի խարխախները վերևի խարխախների համեմատությամբ ունեն առավել պարզ և ճիշտ միանման մշակումներ (պրոֆիլներ), նրանց երեքական (արևելյան, արևմտյան և զեպի Տաճարի կենտրոնական մասը ուղղված) ճակատների լայնությունները միմյանց հավասար են և ունեն բավականին մեծ չափեր, իսկ մեկական (զեպի հյուսիսային և հարավային պատերը ուղղված) ճակատներն զգալիորեն նեղանում են:


Հասկանալի է, որ ներքևի խարխախների վրայից բարձրացող մույթների աչգ միմյանց հավասար երեք ճակատներին համար էլ ի նկատի են ունեցվել միևնույն ծանրությունը կրող միմյանց հավասար կամարներ: Այստեղ զմերթակիր կամարներ, ուրեմն և զմերթ շեն նախատեսվել:

Ճիշտ համանման կառուցվածքի մույթներ գոյություն ունեն քրիստոնեական վաղ շրջանի Հայաստանի բազիլիկային եռանավ կառուցվածքներում (Քասաղ, Աշտարակ, Երիտուր և այլն):

Օրինակ, Քասաղի եռանավ կառուցվածքում մույթների կտրվածքներն ունեն հետևյալ չափերը.



Աշտարակում եռանավ կառուցվածքից միակ պահպանված մույթը գնի հետևյալ չափերը.



22. Հանձնաժողովի կազմի մեջ մտնում էին՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Հնագիտության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Բ. Առաքելյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Երևարարության և Հարտարապետության պետական կոմիտեի Հարտարապետական հուշարձանների պահպանության բաժնի վարիչ, Հարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի ավագ գիտական աշխատակից, Հարտարապետության թեկնածու Ս. Մնացականյանը, Մայր Տաճարի վերակառուցման շինարարության գլխավոր ինժեներ Ա. Մանվելյանը և առգերիս գրողը:

Քարերախտաբար, այս հուշարձանների մուլթերը հենց այսօր էլ կանգուն են:

Ինչպես տեսնում ենք, էջմիածնի ներքևի խարխսխներին համապատասխանող մուլթերին նման, Քասաղի և Աշտարակի եռանավ կառուցվածքներում նույնպես մուլթերի արև-վելյան, արևմտյան և դեպի տաճարի կենտրոնական մասը ուղղված ճակատներն ունեն հավասար մեծություններ²³, իսկ Քասաղի և Աշտարակի կառուցվածքները, ինչպես հայտնի է, հանդիսանում են ոչ թե գմբեթակիր, այլ թաղակապ ծածկով բազիլիկալ կառուցվածքներ:

Նշանակում է՝ էջմիածնի Մայր Տաճարի այժմյան գմբեթավոր մուլթերի տակին զտնդվող ներքևի խարխսխներն իրենց հորինվածքով-կառուցվածքով հար և նման են քրիստոնեական վաղ շրջանի Հայաստանի եռանավ թաղակապ կառուցվածքների համանման մանրամասներին և անկասկած պատկանել են ոչ թե գմբեթակիր, այլ Քասաղի և Աշտարակի եռանավ բազիլիկաների նման թաղակապ ծածկով կառուցվածքի:

Ընդդրում, որոշակի ընդհանրություն գոյություն ունի մի կողմից էջմիածնի մուլթերի ներքևի խարխսխների և Քասաղի ու Աշտարակի սկզբնական կառուցվածքների խարխսխների մշակումների բնույթի (ոճի), մյուս կողմից էջմիածնի մուլթերի վերևի խարխսխների և Քասաղի ու Աշտարակի սկզբնական կառուցվածքներին հետագայում (ամենայն հավանականությամբ 5-րդ դարում) ավելացված համանման մանրամասների մշակման բնույթի (ոճի) միջև:

Ուրեմն, ոչ միայն էջմիածնի մուլթերի ներքևի խարխսխների ընդհանուր ձևն է հար և նման քրիստոնեական վաղ շրջանի հուշարձաններ Քասաղի և Աշտարակի համանման մանրամասների ընդհանուր ձևին, այլև ակնհայտնի ընդհանրություն գոյություն ունի նրանց մշակումների բնույթի (ոճի) միջև: Նշանակում է՝ էջմիածնի Մայր Տաճարի գմբեթակիր մուլթերի տակին զտնդվող ներքևի խարխսխները նույնպես կարող են հանդիսանալ քրիստոնեական վաղ շրջանի, ավելի ճիշտ, քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու սկզբնական ժամանակաշրջանի գործ:

Հետևապես, առաջին խարխսխներին համապատասխանող շենքն է, որ ունենալով Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի

հուշարձաններ՝ Քասաղի և Աշտարակի տիպի թաղակապ կառուցվածքների հորինվածք, պետք է հիմնված լինի Աղաթանգեղոսի մոտ հիշատակված վկայության համապատասխան Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Լուսավարչի կողմից, քրիստոնեական կրոնը Հայաստանում պետական հռչակելու (301 թ.) առաջին տարիներին:

2. Վերևի խարխսխների մշակումը՝ պրոֆիլների ձևը, ինչպես նշվեց, հար և նման է Քասաղի ու Աշտարակի սկզբնական կառուցվածքներին հետագայում (ամենայն հավանականությամբ 5-րդ դարում) ավելացված մասերի (արսիզի, մուլթերի), ինչպես և 5-րդ դարի վերջերին (475/9—493/4 թ. թ.) կառուցված Բուշխի Սիոնի (Վրացական ՍՍՏ) մուլթերի խարխսխների մշակումներին (պրոֆիլներին):

Ակնհայտ է, որ երբ վերևի խարխսխները և նրանց համապատասխան շենքը սկսել են կառուցել, նախորդ ամբողջությամբ քանդել են, թողնելով միայն անջատ կանգնած մուլթերի այն խարխսխները, որոնց վրայից պետք է բարձրացվեին նոր կառուցվող շենքի գմբեթակիր մուլթերը: Փաստորեն, նոր շենքը կառուցողը, հինը հիմնովին, փնչպես պատմիչն է վկայում՝ «հիմնարկեալ», և ինչպես Թ. Թորամանյանն է հասկանում այդ վկայությունը՝ «հիմքից ի վեր վերաշինել է»: Այսինքն, տեղի է ունեցել ճիշտ և ճիշտ այնպիսի վերակառուցում, ինչի մասին հաղորդում է շինարարական այդ աշխատանքներին ժամանակակից (Յերես և ակնատես) 5-րդ դարի պատմիչ Հազար Փարպեցին, որն այդ վերակառուցումից հետո Վահան Մամիկոնյանի կողմից նշանակվել էր էջմիածնի Տաճարի վանահայր:

Ուրեմն, վերևի խարխսխները, ըստ ընդհանուր կառուցվածքի, անվիճելիորեն պատկանելով գմբեթակիր շենքի, ըստ մշակման բնույթի (ոճի) համապատասխանում են 5-րդ դարի շենքերի ճարտարապետական համանման ձևերի մշակումների բնույթին (ոճին), իսկ վերակառուցման ակնառու պատկերը ճշտությամբ համապատասխանում է Հազար Փարպեցու հաղորդած, 5-րդ դարի վերջերին կատարված վերակառուցմանը:

Այսպիսով, մի կողմից ստույգ փաստ է դառնում 5-րդ դարում էջմիածնում, հետևապես և Հայաստանում կենտրոնագմբեթ հորինվածքի գոյությունը, իսկ մյուս կողմից վավերացվում է պատմիչի վկայության խկությունը:

(Շարունակելի)

23. Այսպիսի ձև ունեն նաև Բուշխի Սիոնի բազիլիկալ կառուցվածքի (Վրացական ՍՍՏ) մուլթերը, Այդպես է եղել նաև Դվինի բազիլիկայում: